ք. Երևան, Ս.Դավթի 87ա **<<29>> Հոկտեմբեր 2021**

«ՏՐԱՆՋԻՏ-ՍԵՐՎԻՍ» Սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերություն
(ՍՊԸ), ՀՎՀՀ 07903733, ՏԱՎՈՒՇ ԴԻԼԻՋԱՆ
Լերմոնտովի 42

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

Հայտնում ենք Ձեզ, որ ըստ հարկային մարմնում առկա անձնական հաշվի քարտի տվյալների չկատարված ընդհանուր հարկային պարտավորություններից 7070096 դրամ գումարը, այդ թվում ապառք՝ 4869092 դրամ, տույժ՝ 253212 դրամ, տուգանք՝ 1947792 դրամ, որից՝

1. **ԱԱՀ -** պարտավորություն՝ 7070096 դրամ, ապառք՝ 4869092 դրամ, տույժ՝ 253212 դրամ, տուգանք՝ 1947792 դրամ, որն առաջացել է՝ 2021թ. մայիս ամսվա հաշվարկից, տույժը հաշվարկվում է ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն, իսկ տուգանքը՝ 402-րդ հոդվածի համաձայն

Գանձելու նպատակով, համաձայն <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <բ> կետի, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում հարուցվել է վարչական վարույթ՝ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված վարչական ակտ ընդունելու նպատակով:

Ի կատարումն <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 35-րդ և 38-րդ հոդվածներով վարչական մարմնին վերապահված պարտականությունների, առաջարկում ենք սույն ծանուցումը ուժի մեջ մտնելու օրվա 3-րդ օրը, ժամը 11:00 ներկայանալ վարչական վարույթի լսումներին, կամ մինչև նույն ժամկետը ներկայացնել վերը նշվածի վերաբերյալ Ձեր գրավոր բացատրությունը և <կամ> առարկությունը հետևյալ հասցեով՝ ք. Երևան Ս.Դավիթ 87ա:

Չներկայանալու դեպքում գործը կարող է քննվել Ձեր բացակայությամբ:

Տեղեկացնում ենք նաև, որ վերը նշված հարկային պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով հարկային մարմնի կողմից կարող է կիրառվել ընկերության դրամական միջոցների և գույքի արգելադրում ՀՀ հարկային օրենսգրքի 78-րդ գլխի համաձայն:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԵՌԱԽՈՍ՝ 011-54-91-91
ՆԵՐՔԻՆ ՀԱՄԱՐ՝
91-71, 91-55, 91-68, 91-89, 91-65, 91-07, 91-47, 91-87, 91-48, 91-95, 91-05